



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԸԿԸՆ ԵՒ ԲՆԸԿԸՆ

ԳԻՏԵԼԵԱՅ

ՔԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒՆԱԿԱՆ

1853

ՅՈՒՆՈՒԱՐԻ ԿՈՒՆԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿԱՆ ԿՈՒՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

Շնորհապարհ Նոր տարի :

ԱՅՍՕՐ բարեմաղթութեան ձայներով օգր անդադար կը հնչէ . բարե տուողը կը բարեմաղթէ , բարե առնողը բարեմաղթութի կը պատասխանէ . և ամենուն բերանն ալ ուրիշ բան չսուիր բայց եթէ՝ Նոր տարի , Նոր կեանք , Նոր օրեր , զորոնք կը փափաքին փոփոխ իրարու գլխուն : Սենք ալ որ ազգին բարութեան նուիրեր ենք կեանքերնիս , չենք կրնար սրտերնուս այս մարդասիրական փափաքը ցուցնելէն ետ կենալ . անոր համար ահա կը փութանք

մեր կողմանէ ալ մեր բարեմաղթութիւնները ընելու :

Բայց ինչ . երբ գրիչը ձեռքս առի՝ յա նուն Բազմավիպին սրտերնուս եռանդը բացատրելու , մեծ մտմտութի մը մէջ ընկայ . մենք որ , կ'ըսեմ , ազգերնուս բարւոյն լիութեանը կը փափաքինք , այստուրական բարեմաղթութեան արձագանքը տալով՝ ինչպէս գոհ պիտի ըլլանք : Բայց զարմանքս դարձաւ նաեւ ամէն մարդկանց վրայ . հասկա , կ'ըսեմ , այս ամէն մարդիկ իրենց սիրելեաց և իրենց

աղգին այս նորութիւնը մաղթելով ինչպէս գոհ կ'ըլլան : Ուրիշ այնչափ բառեր կան՝ որ նոր չեն նշանակեր , բայց նորէն աղէկ են , անոնց մէկն ալ տարւոյն վրայ չեն գործածեր : Տարին առջևնին եկաւ , տեսան որ նոր է , ամէնքը գոհ բերանով շնորհաւոր կը գոչեն : Բայց այն մարդիկն են՝ որ երբ խանութ մը կ'երթան նոր բան մը գնելու , երբ վաճառականը ուզածնին առջևնին կը բերէ , ահա նոր է ըսելով մէկէն գոհ չեն ըլլար ու առներ երթար . այլ կը սկսին քննել՝ թէ արդեօք աղէկ է , իրենց ուզած վախճանին աղէկ կը ծառայէ , շատ կը դիմանայ . ուրիշ հազար տեսակ քնննութիւններ կ'ընեն վրան , ու այնպէս կը գնեն : Իսկ այս ամենակարեւոր ժամանակը որուն հազար տեսակը կ'ըլլայ , երբ առջևնին կուգայ , առանց մէկ տարակուսի մը , անոր նորութիւնը տեսնելով՝ մէկէն սիրով կ'ընդունին ու կուրախանան ալ : () այս բաներս մտածելով՝ սկսայ ըսել ինքնիրենս . Երբ Եւտուծոյ , մէյմը խեղդ վրադ ժողովէ , տես , թէ այս ինչ անտեղի բան է ըրածդ . անցեալ օրերը չուխա գնեցիր՝ որ այս նոր տարին պատուես . որչափ քննեցիր որ չըլլայ թէ խաբուիս . միայն նոր ըլլալ տեսնելով գոհ չեղար . և դու պարոն տուն շինեցիր հազար զգուշութիւններով՝ որ չըլլայ թէ խախտու ըլլայ , ու մէջը մտած ատենդ վրադ փլէի . ես գիրք մը գնելու կ'երթամ , նոր ըլլալուն գոհ չեմ ըլլար , մէջի իմաստը կը քննեմ . ասոնց նման ամէն բանի վրայ ընտրութիւն կ'ընենք . ու այսօր նոր տարին առջևնիս տեսնելուն պէս , առանց մէկ տարակուսի մը նոր տարի ըսելով , ուրախանալով , շնորհաւոր կանչելով՝ մէջը կը մտնենք , ամենեւին հոգ չենք ըներ որ յանկարծ չխաբուինք . այս ինչ տեսակ միամտութիւն է ըրածնիս : Եւրոպեալ տարի ալ այսպէս ընտրութիւն չընելով ընդունեցանք . տեսանք որչափ գէշութիւններ մէջը պատահեցան , զորն որ հիմա կ'ատենք՝ հին տարի , գէշ տարի ըսելով :

Եւս անդրադարձութիւններն ընե-

լով՝ ամենեւին գոհ չեղայ այս տեսակ շնորհաւորութեանը վրայ . ուստի սկսայ մտածել տարւոյն վրայ՝ ուրիշ աղէկութիւններ բարեմաղթելու համար . և այն աղէկութիւններն ալ որպէս զի աւելի հաճոյ անցնի ամէն մէկուն , մտածեցի իւրաքանչիւր մարդու իր սրտին ուզածը բարեմաղթելու : Բայց կը տեսնեմ որ այս բանիս մէջն ալ երկու դժուարութիւն կայ . մէյմը որ իւրաքանչիւրին ուզածը չենք գիտեր . և երկրորդ որ մէկին ուզածը մէկալին դէմ կրնայ գալ . զոր օրինակ՝ մէկը շատ անձրեւ կ'ուզէ , մէկալը շատ արեւ . աս երկուքին ուզածն ալ ինչպէս կրնանք բարեմաղթել առանց իրարու տհաճութիւն պատճառելու : Ուրեմն հարկ կըլլայ որ նախ ամենուս բաղձանքները միաբանենք , ու ետքը բոլորին մէկէն այնպիսի բան մը բարեմաղթենք , որով ամէնքն ալ գոհ և երջանիկ ըլլան : Եւս բանիս հարկաւորութիւնը այնչափ աղգեց սրբտիս , որ ինձ պարտք սեպեցի , չէ թէ միայն մեզի համար , այլ ընդհանուր ամէն մեր ազգայնոց մէկ ուրիշ նոր բարեմաղթութեան ձև մը առաջարկել : Եւ որպէս զի այս բանս դիւրաւ գուխ ելլէ , պատշաճ դատեցի ժողով մը ձևացնել , ու ամենուն խորհրդով մէկ ընդհանուր բարեմաղթութեան նիւթ մը գտնել , որով ամէնքը իրարու աղէկ տարի բարեմաղթեն , և անով ամէն աղգայինք կարենան մէկ աղէկ տարի մը ունենալ :

Եւ որովհետեւ ամէն ազգայինք իւրաւունք ունին այս ժողովքին մէջ գլխունուելու , որպէս զի կարենան իրենց կարծիքը և հաւանութիւնը տալու , անոր համար ամէն մեր Բազմավէպը կարգացողներուն կաղաչենք՝ որ յանձն առնուն այս ժողովքին մէջ ներկայ ըլլալու , և իրենց կարծիքն ըսելու : Եւ գիտնալով ալ՝ թէ ամէնքը յօժարամիտ կ'ընդունին այս մեր հրաւերը , անոր համար հիմա կը ձևացնենք՝ թէ ամէն մեր կարգացողներուն հետ ժողովուեր կը մըտածենք :

Եւ որպէս զի կարգաւորեալ ըլլայ

խօսակցութիւննիս , և ամենուն հաւանութեամբ ըլլայ տարւոյն աղէկութեան ընտրութիւնը , ամէն մեր կարգացողներուն պէտք եղած հարցմունքները կ'ընենք . և ինչ պատասխան որ կը գուշակենք որ պիտի տան , զայն խօսքն ալ կ'ըսենք ձեր բերնէն :

Աստի հիմա նախ կը հարցնենք մեր ընթերցողներուն՝ թէ ինչ կարծէք կարեւոր չէ՞ զայս ընտրութիւնը ընելը : — Այս հարցմանս պատասխանը յայտնի գիտենք՝ որ ամէնքնիդ մէկ բերան պիտի ըսէք՝ թէ կարեւոր է ընել այսպիսի ընտրութիւն մը , եթէ կարելի է : Արդեւ մենք այսպէս սովորած ըլլալով մեր պղտիկութենէն , առանց գէշ տարիներու հանդիպելու ենք : Այոյ այս ալ կայ՝ որ մենք ամէն մէկերնիս առանձին եթէ ուզէինք ալ ընտրութիւն ընելու՝ չէինք կրնար . վասն զի ինչպէս որ յայտնի է , ամէն բանի մէջ չգիտցողը կը խաբուի , ինչ և իցէ գործքի մէջ հմտութիւն չունեցողը ընտրութիւն չկրնար ընել . հիմա աղէկ եղաւ որ այսպէս խորհրդով ընտրենք , որ ամէն մարդ իր գիտցածը , իր ճանցածը ըսէ տարւոյն աղէկութեանը վրայ , և այսպէս միաբան ամենէն աղէկ տարին ընտրենք մեզի : — Այսպէս ամէնքնիս միասիրտ յօժարակամ ըլլալէն վերջը աղէկին ընտրութեանը համար , ամենեւին մի տարակուսիք յաջողութեամբ ընտրութիւնը գլուխ ելլելուն վրայ : Հիմա ես կ'առաջարկեմ ձեզի որ մէկիկ մէկիկ ըսէք ձեր կարծիքները՝ թէ ինչ տեսակ աղէկութիւն կ'ուզէք որ ունենայ այս տարին :

Ա . Այս շատ գէշ տարիներ անցուցի առուտուրի անյաջողութիւններով և աղքատութեամբ . ինծի համար կ'ուզեմ մէկ յաջող առուտուրի տարի մը : — * Առ է . հիմա կարգաւ նշանակենք : Այս պարոն ինչ տեսակ տարի կ'ուզես :

Բ . Ամ առուտուրս աղէկ է , բայց իմ վիճակիս համար քիչ կու գայ , ինծի վայրած կահ կարասիքը և զարդարանքը

չեմ կրնար ընել , կ'ուզեմ որ այս ինծի բաղդի տարի մը ըլլայ , մէկ անակնկալ կերպով մը հարստութիւն ունենամ : — * Հասա քու ուզածդ ինչ է պարոն :

Գ . Այս ընտանեաց մէջ շատ հիւանդութիւններ պատահեցան , կ'ուզեմ որ մէկ առողջ կենաց տարի մը ունենանք :

— * Ասկ դու պարոն ինչ կ'ուզես :

Դ . Այս միշտ կեանքս աշխատանաց և ծառայութեան մէջ անցուցեր եմ , կը փափաքեմ որ ինծի յաջողութիւն մը ըլլայ , ու այս տարի ինք իր գլխուս հանգիստ կեանք մը անցընեմ :

— * Արի՜ ինչ տեսակ աղէկութիւն ուզող կայ այս տարի :

Ե . Այս ամենքնիս կ'ուզենք որ ազգային թշնամութիւնները ատելութիւնները մշլերնէս վերցուելու տարի մը ըլլայ այս :

Զ . Այս ամենքնիս կ'ուզենք որ մեր կողմը բռնողներուն այս յաղթութեան տարի մը ըլլայ :

Է . Այս սրտին փափաքը այն է՝ որ իրաւունքը մեր կողմը ըլլալն յայտնուի :

Ը . Այս բոլոր բաղձանքնիս այս է՝ որ ամէնքը իրենց ազգաւ հայ ըլլալն իմանան , ու ազգերնին սիրեն որ իրավութիւնները արմատաքի ջնջուի մշլերնէս :

Այս բաւական է . ընդհանրապէս իմացայ ձեր ամենուն ալ սրտերնուդ ուղածները : Այս ըսածներնէդ , զորոնք նշանակեցինք , մէկալնոնց սրտերնուն յօժարութիւնները հասկցուեցաւ : Հիմա կ'իմանամ պատճառը՝ թէ ինչու համար տարւոյն նորութիւնը կը չնորհաւորէք եղեր առանց յիշելու անոր աղէկութիւնը . վասն զի ձեզմէ ոմանց ուզած աղէկութիւնները չըլլալու մասնաւանդ թէ փաստակար բաներ են , ոմանցն ալ իրարու ուղածին դէմ են : Այսպիսի տարին աղէկ չկրնար ըլլալ : Աստի եթէ կ'ուզէք այնպիսի տարի մը ունենալ որ ամենուդ առ հասարակ աղէկ ըլլայ , պէտք է որ խորհրդով միա-

բանիք ու այնպիսի բան մը ուզէք՝ որ ամենուն ալ օգտակար ըլլայ :

Ն. Բայց փափաքելի բան է, բայց կերևայ թէ անկարելի է : — Եթէ փափաքելի է, ու ամենիդ ալ այս մտքիս վրայ կը միաբանիք, զիտցէք որ անկարելի չէ : Սիայն թէ բանը այն է՝ որ ամենքնիդ ալ չափաւոր աղէկութեան գոհ ըլլալով միաբանիք : Բնէկ ըսաւ քիչ մը առաջ այն պարունը՝ թէ բանի մը ընտրութիւն ընելու համար կատարեալ ճանաչմունք պէտք է . ուստի հիմա մեզի ալ ժամանակին ինչպիսի բան ըլլալուն վրայ՝ փորձ մարդ պէտք է, որ այս ընտրութիւնը կարենանք ընել : Բայց ատկէ զատ մէկ ուրիշ դժուարութիւն մ'ալ կայ, այսինքն փորձ եղողի ձեռքով ընտրելէն վերջը, ամենուն հասկըցնել և հաւնեցնել թէ այն է աղէկ . որ կարենան միաբանիլ այնպիսի աղէկ տարին ուզելու, որ ամենուն առ հասարակ օգուտ ըլլայ : Բայա թէ ոչ, անօգուտ կ'ըլլայ ընտրութիւնը, երբ ընտրութիւն ընելէն ետքը՝ դարձեալ ամէն մէկերնին չճանչնալով ընդհանուր աղէկը, իրենց միտքերնուն դրածներն ուզեն : Եւ տարւոյն գէշ ըլլալուն բոլն իսկ պատճառն է՝ այս ամէն մարդուն իր աչքին աղէկ երեցածն ուզելը :

Բ. Երբեմն ինչպէս ընենք : — Պէտք է որ ամենքնիս միաբան այնպիսի աղէկութիւն մը ուզենք, որուն մէջ ամենքն ալ իրենց փափաքած աղէկութիւնը գտնեն :

Գ. Բայցպիսի բան ինչպէս կրնայ ըլլալ : — Եթեմենին տարակոյս մ'ունենաք՝ որ եթէ ամենքնիս աղէկ տարի մը գտնելու համար շիտակ սրտով ընդհանուր հաւասար ամենուն համար աղէկ տարի մը ընտրելու ըլլանք, այն ատեն ամենքնիս ալ քիչէն շատէն այս տարւոյս աղէկութիւնը կը վայելենք : Եւ այսպիսի աղէկ տարին ուրիշ աղէկութիւն մ'ալ կ'ունենայ՝ որ իր հետեւեալ տարին իրմէն աղէկ կ'ըլլայ : Բայս բանիս մէջ խիստ դժար երեցածն է շիտակ սիրտ գործածելը . վասն զի աշխարհիս երեսը ամէն անկարգութեանց պատճառն է՝ մարդ-

կան իրենք զիրենք խաբէնին, որ խիստ շատ անգամ կ'իրբը սրտերնուս վրայ իշխած ըլլալով՝ կարծենք թէ շիտակ սրտով գործքի մը հետ կ'ըլլանք, և այնպէս առանց խղճմտանք ընելու կը գործենք՝ շիտակն այս է ըսելով . և ինչուան կ'իրբը սրտերնուս մէջէն չելլէ, չենք կրնար իմանալ թէ շիտակ չէ ըրածնիս . բայց երբոր կ'իրբը սրտերնուս վրայէն փարատի, այն ատենը կը տեսնենք որ խաբուած ենք եղեր : Բայս բանս այլ և այլ դիպուածի մէջ ձեզի ալ պատահած կրնայ ըլլալ . և հիմա եթէ մտածէք այս այն դիպուածին վրայ, կը գտնէք որ ինչպէս եղեր է որ կ'իրբը սրտերնեդ պակսելէն վերջը յայտնի տեսեր էք՝ թէ սխալ է եղեր ըրածնիդ, ու դուք չէք հաւատացած քանի որ կ'իրբը տիրած էր սրտերնուդ վրայ, և չէք համոզուած թէ սխալ է մտածածնիդ, բայց ետքը փորձով իմացեր էք : Օրօինակ ըսենք թէ մէկը միտքը դրեր էր սա նա մարդոց հետ ընկերութիւն ընելու, ըսելով՝ թէ նա այսչափ ստակ ունի և ասոր անոր ճանչնոր է, ես ալ այս այն բանին տեղեկութիւն ունիմ, և գիտեմ որ այս տեսակ առուտութիւն սա նա հարստացեր են, ուրեմն մենք ալ միանանք ու այս բանիս ձեռք զարնելու որ ըլլանք, քիչ ժամանակի մէջ սանկ առնելով, նանկ ծախելով, այսչափ հարուտութիւն կրնանք դիզել : Եւ ասոր այսպէս մտածելու ատեն, ուրիշ փորձ մարդ մը եկեր իրեն ըսեր է՝ թէ պարապ տեղը այդպիսի բանի ձեռք մի գարներ, այդ բանիդ մէջ սա և սա դժուարութիւնները կան, այն մարդոց ընկերութեամբ այս բանս գէշի կ'երթայ : Եւ յիշ ժամանակը այն մարդուն գլուխը տաքցած իր մտքին մէջի պատճառներով, և ետեւի վատրկելու հարստութեան սիրտը վառուած, չկրնար հաւտալ այն փորձ մարդուն խօսքին . և կը կարծէ թէ իր մտածածը խիստ շիտակ է, ու այն մարդուն խելքը կարճ ըլլալուն, կամ վախկոտ բնութիւն ըլլալուն, զինքը կուզէ հրաժարելէն իր օգտակար խորհրդէն . ուստի անոր խօսքին


սկանջ չդնելով՝ իր գիտցածին ձեռք զարկեր է , ու ան մարդուն ըսածին պէս անյաջողութեան հանդիպեր է : Իհա այն ատենը միայն աչքը բացուեր ու իմացեր է՝ որ այն փորձ մարդն իրաւունք ունի եղեր , պէտք է եղեր անոր խօսքին մտիկ ընել , իր մտածածը ծուռ է եղեր , և ինքը այն ատենը չէ կրցած

շիտակն հասկընալ : Իսոր նման հազար տեսակ զիպուած ամենուն գլխէն կանցնի . ասկից յայտնի է՝ թէ ինչ դժար բան է որ մարդ մը գործքի մը ձեռք զարկած ատեն շիտակ սիրտ գործածէ :

(ՄԵՑՑԱԾՆ ՈՒՐԻՇ ԱՅԳԱՄ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



Անկերանոց ապիկար զինուորաց :

ՓԱՐԻԶՈՒ փառաւոր ու յիշատակաց արժանի շէնքերէն մէկն ալ ապիկար զինուորաց անկերանոցն՝ է : Իսոր հիմը դրաւ Սեծն Սուղուիկոս 1670^{էն} , ու չորս տարուան մէջ լմնցաւ : Ենքին տարածութիւնը տասնութը հազար եօթը հարիւր քառասունչորս ձողաչափ է , որ Սէն-Լէրմէն արուարձանին արեւմտեան ծայրերը կ'իյնայ : Գրած պատկերնիս շէնքին Սենայի կողմի ունեցած տեսքն է . առջևը նախագաւիթ

մը ունի , որ երկաթ վանդակով պահպանեալ է . ու չորս կողմը փոս փորած է . իսկ անկերանոցին զիմացի թնդանօթները՝ կը գործածուին հասարակաց տօն մը կամ հանդէս մը և կամ տէրութեան յաղթութիւն մը աւետելու , և այլն . ասոնցմէ երկուք մը Ղալիլիի պաւտերազմներու մէջ գերեալ թնդանօթներէն են . ձախակողմը տեսնուող կաթուղիկէն եկեղեցւոյն գմբէթն է : Երկու մաս կը բաժնուի եկեղեցին . առջինը կ'ըսուի Լաֆաւորալան , ինչու որ հոս կուգար թագաւորը պալատականներու